

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕՏԱՐ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ (1915-1923թթ.)
ՏԻԳՐԱՆ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

XX-րդ դարի ամենամեծ ոճիրներից մեկը համարվող 1915-1923թթ. Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունը, ի թիվս այլոց, ուշագրավ է միջազգային իրավունքի հետ հարաբերակցելու համատեքստում քննելը, թերևս, այն պատճառով, որ ցանկացած հետազա հանցագործության կանխման լավագույն միջոց համարվում է նախորդ նմանատիպ հանցագործության պատասխանատվության իրականացումը: Այս տեսանկյունից ակնհայտ է, որ Հայոց ցեղասպանության անպատժելիության փաստը XX-րդ դարի հետազատամամյակներում ոգևորել և խրատել է յուրաքանչյուր հակամարդկային հանցանքի նախաձեռնողի: Ուստի, կարծում ենք՝ մինչև օրս պատշաճ չի կատարվել «մոռացված ցեղասպանության» համար միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու հիմնախնդրի պատմա-իրավական վերլուծությունը:

Տակավին 1915թ. մայիսի 24-ին, երբ Հայոց ցեղասպանությունը զտնվում էր վերընթաց փուլում, Ամտանոյի տերությունները (Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան) հանդես եկան ոճիրը դատապարտող համատեղ հայտարարությամբ, ուր, մասնավորապես, ասվում էր. «Հայաստանում տեղի են ունեցել հայկական կոտորածներ՝ թուրքերի և քրդերի կողմից, օսմանյան իշխանությունների քաջահայտ թողտվությամբ, իսկ հաճախ էլ՝ ուղղակի համագործակցությամբ: ... Մարդկության և քաղաքակրթության դեմ Թուրքիայի կատարած այս մոր հանցագործությունները նկատի ունենալով, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնակից կառավարություններն այսու հրապարակավ հայտարարում են Բ. Դռանը, որ իրենք այս հանցագործությունների համար անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա այն տեղական իշխանությունների վրա, ովքեր մասնակից են դարձել նման կոտորածին»:¹

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո, համաձայն Մոսկովի 1918թ. հոկտեմբերի 30-ի զինադադարի պայմանների, Թուրքիան ճանաչեց դաշնակից տերությունների իրավունքը՝ զինվորական դատարանին հանձնելու այն

անձանց, ովքեր պատերազմի ընթացքում մեղսակից էին հայաջնջման թուրքական քաղաքականությանը:² Ուշագրավը սակայն այն է, որ դաշնակից ուժերի դերում արդեն համոզես էր գալիս Անգլիան, քանզի Մուղղոսի զինադադարից հետո Կ. Պոլիսը և հարակից տարածքները գտնվում էին անգլիական օկուպացիոն զորքերի հսկողության ներքո:³ Իսկ երբեմնի հզորագույն տերություն Ռուսական կայսրությունը, ցնցված և հյուժված ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բախումներից, կարծես, մտքաթող էր արել իր արևելյան քաղաքականությունը, ուստի և՛ հայ ճակատագիրը: Արևելյան հարցի նկատմամբ ներքին և արտաքին դրդապատճառներով էր իմնավորված նաև Ֆրանսիայի առժամանակ քաղաքական պասիվությունը:

Քաղաքական պատճառներով էր քացատրվում նաև Թուրքիայի կողմից 1918թ. դեկտեմբերին ռազմական դատարանի հիմնումը,⁴ որի, թերևս, միակ նպատակը «դաշնակիցների»՝ Ալիոնի, արկածախնդիր և պատեհապաշտ քաղաքականությանը հագուրդ տալն էր:

Վերջինիս նախաձեռնություններից էր քիտում, որ. «արդեն 1919թ. հունվարին, թուրքական կառավարությունը սկսեց ձերբակալությունների իրականացումը: Այն վերաբերում էր չորս կարգավիճակ ունեցող անձանց՝ 1. Միության և առաջադիմության կենտրոնական կոմիտեի անդամներ, 2. պատերազմական ժամանակաընթացքի երկու կառավարությունների անդամներ, 3. նահանգապետեր, 4. քաղաքական և զինվորական ծառայողներ»:⁵ Հունվարի վերջին 30 թուրք քաղաքական գործիչներ, որոնց թվում՝ իթքիհատի կենտրոնական կոմիտեի անդամներ, ներկայվեցին: Նրանց շուտով միացան ավելի ցածր կարգավիճակ ունեցող այլ անձինք, որոնք ուղղակիորեն էին ներգրավված եղել կոտորածներում: Այս տեսանկյունից ձերբակալությունները կատարվում էին հետևյալ չափանիշներով. «ա. անձինք, որոնք ձերբակալվել էին գլխավորապես հասարակական անվտանգության նպատակով, և միայն երկրորդ դեպքում քրիստոնյաների կոտորածների մեջ մասնակցության պատճառով, բ. կոտորածներում մեղսակցության պատճառով ձերբակալված անձինք, գ. քրիտանական ռազմագերիների հետ վատ վերաբերմունքի պատճառով ձերբակալված անձինք, դ. քրիտանական կառավարության խնդրանքով ձերբակալված անձինք, ե. թուրքական կառավարության սեփական նախաձեռնությամբ ձերբակալված անձինք»:⁶ Ներկայվածների շարքում չէին գտնվում երիտթուրքերի «մեծ յոթնյակը»՝ Թալեաթ, Էնվեր, Ջեմալ փաշաները, Նազըմ և Շաքիրը, Բեղլին և Ազմին:⁷ Մրանք դեռևս 1918թ. նոյեմբերի 1-ին փախուստի էին դիմել Կ. Պոլսից, գերմանական «Փեթրի» և «Ազմի» հաժաճավերով⁸ և բոլորը, բացի Էնվերից, գտնվում էին Բեռլինում: Միայն մի քանի տարի անց, հուսախաբ հայ ժողովրդի վրեժխնդիր հերոսները Բեռլինում, Հռոմում և Թիֆլիսում վրեժխնդիր եղան երիտթուրքերի այս պարագլուխներից:⁹

Հայոց ցեղասպանության նախաձեռնողներն ու իրագործողները սկզբում պահվում էին Կ. Պոլսի Մերասկեբատ քանդում: Այդ կապակցությամբ որպես ահազանգ էր հնչում 1919թ. Սև ծովի քրիտանական բանակի գլխավոր հրամանատարի նամակը՝ ուղղված Կ. Պոլսում քրիտանական գլխավոր հանձնակատարին, որում ասվում էր. «ա. բոլոր բանտարկյալներին, որոնք 112-ն են, թույլատրվել է օրվա ընթացքում ազատ հանդիպել իրար հետ և շրջել քանդում: բ. բանտարկյալների մտերիմների համար

ամենօրյա տեսակցության ժամը ենթադրվում է, որ 12.00-14.00-ն է, քայց այս ժամը չի պահպանվում և ամբողջ օրվա ընթացքում կարելի է տեսնել քանտ մերս մտնող և դուրս եկող անձանց: Գ. քացի նրանց մոտք ու ելքի նկատմամբ անփույթ տնտղահայացքից, քանտ մերս մտնելիս այդ անձինք չեն ենթարկվում որևէ ստուգման և հաճախ նրանց տեսնում են մեծ փաթեթներ մերս մտցնելիս. հիմնավորվում է, որ սնունդ է, քայց կարող է լինել ամեն ինչ: Դ. կանանց մերս մտնել թույլատրվում է օրվա ցանկացած պահի, քայց նրանք երբեք չեն ստուգվում: Ե. թուրքական զինվորները, որոնք կարգվել են հսկելու քանտարկյալներին, ազատ շփվում են նրանց հետ, ըստ հայեցողության մտնելով և դուրս գալով քանտից և, եթե դուրսագաց են կաշառքի նկատմամբ, ապա՝ նրանց համար շատ հեշտ կլինի օժանդակել քանտարկյալների փախուստին»:¹⁰

Բրիտանական արդարադատության իրականացման կեղծ պատրվակի ներքո 1919թ. 64 իթթիհատական քանտարկյալներ անգլիական իշխանությունների կողմից գերվեցին և տեղափոխվեցին Մալթա կղզի. այդ թվում՝ նախարարներ, բարձրաստիճան քաղաքական գործիչներ և զինծառայողներ, տեղական մարմինների ղեկավարներ:¹¹

Ընդհանուր առմամբ, Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո պարտված Թուրքիայում սկսված դատական գործընթացի արդյունքում, Հայոց ցեղասպանության մեղսակից. «...1376 անձ դատապարտվեց տարբեր աստիճանի պատժի.... 62 պաշտոնյաներ դատապարտվեցին մահապատժի»:¹²

Մեզ հայտնի չէ պատմական որևէ հավաստի աղբյուր, որտեղ առկա լինեին ինչպես բոլոր մեղադրյալների ետդատական ճակատագրի մանրամասները, այնպես էլ անխտիր բոլորի անվանացանկը: Մեր կարծիքով, դրանք, կամա թե ակամա, թաքցվել կամ ոչնչացվել են ինչպես Թուրքիայի, այնպես էլ նրա նախկին ու ներկա դաշնակիցների կողմից: Ուստի, Մալթայում ներկայված բոլոր թուրք ոճրագործների թվաքանակը և անվանացանկը պարզելու մեր պրպտություններն արդյունք չտվեցին: Այսպես. ոմանք դրանց թիվը համարում են շուրջ 40¹³, մեկ այլ աղբյուր՝ 63¹⁴ հոգի: Մենք կողմնորոշիչ ենք համարում պատմագրության մեջ շրջանառության դրված 64 քանտարկյալ թվաքանակը:¹⁵ Մալթայում պահվող քանտարկյալների քանակը, նախքան նրանց ազատ արձակումը, հասել է 140 անձի:¹⁶ Թերևս, թվերի միջև այս մեծ տատանումները քացատրվում է նրանով, որ անգլիացիների կողմից Հայոց ցեղասպանության ոճրագործների տեղափոխումը Թուրքիայից դեպի Մալթա կղզի իրականացվել է 1919-1920թթ. ընթացքում, տարբեր փուլերով, ճիշտ այնպես, ինչպես հետագայում՝ 1921թ., իրականացվեց նրանց փուլ առ փուլ ազատ արձակումը:

Մարդկության և քաղաքակրթության դեմ իրագործած չարագործության մեղսագործների պատժի հետագա ճակատագիրը դիպուկ կերպով քննութագրել է Ու. Չերչիլը. « Ձինադադարից հետո թուրքերն ասում էին, մենք արժանի ենք պատժվելու, քայց թող մեզ պատժի մեր հին քաղեկամ Անգլիան»:¹⁷

Իսկապես, կամաց-կամաց Մալթայի քանտարկյալները, որոնք, ըստ էության, ազատ կյանք էին վարում, Անգլիայի կողմից վերածվեցին վերջինիս քաղաքական և տնտեսական շահերին ծառայող գործիքի:

1920-1921թթ. Թալեաթը մի քանի անգամ եղավ Հռոմում: Այդ նույն ժամանակ՝ 1921թ., Մալթայից ազատ էին արձակվում ցեղասպան իթթիհա-

տական գործիչները, որոնք Թուրքիա էին անցնում Իտալիայի վրայով, և, տրամաբանությունից զերծ չէ, որ հանդիպում էին Թալեաթին, ստանում նրանից համեմարարականներ, քանզի որոշ ժամանակ անց այդ նույն գործիչները հայտնվում էին Թուրքիայում գլուխ քարծրացրած ազգայնական շարժման պարագլուխ Մ. Զեմալի կողքին։¹⁸

Տերությունների՝ հայերի կոտորածների բոլոր մեղսակիցներին պատժելու մասին 1915թ. մայիսի 24-ի հայտարարությունն ընդհանուր դրույթներով վերահաստատվեց 1920թ. օգոստոսի 10-ի՝ Թուրքիայի հետ կնքված, բայց վերջինիս կողմից երբեք չվավերացված Սևրի պայմանագրի հոդվածներում։ Պայմանագրի 226-րդ հոդվածով «թուրքական կառավարությունը ճանաչեց» հայերի կոտորածներում մեղսակից բոլոր անձանց՝ «չնայած Թուրքիայի ռազմական դատարանի նախաձեռնած դատական գործընթացներին և հետապնդումներին» դատարանին հանձնելու և պատժելու դաշնակից տերությունների իրավունքը։ Այս հոդվածով Թուրքիան պարտավորվեց. «հանձնելու պատերազմի օրենքներն ու սովորույթները խախտած բոլոր մեղադրյալ անձանց»։¹⁹ Պայմանագրի 230-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվեց դաշնակից տերություններին հանձնել այն անձանց, ովքեր դաշնակից տերությունների կողմից կարող են դիտվել որպես մինչև 1914թ. օգոստոսի 1-ը Թուրքիայի մաս կազմող տարածքներում պատերազմի ողջ ընթացքում շարունակվող կոտորածների պատասխանատուներ։²⁰

Մակայն, պատմությանը, դաշնակից տերությունների միջև առկա քաղաքական լարվածության ու հակասությունների և թուրքական ազգայնական կրքերի ընդհանուր աճման պատճառով, վիճակված էր դեմ նետել Սևրի պայմանագիրը։

1921թ. փետրվարի 21-ից մինչև մարտի 14-ը տեղի ունեցավ Լոնդոնի խորհրդածոդովը, որտեղ Բեքիր Սամի բեյը բանակցում էր Մալթայի կալանավորներին ազատելու համար։²¹ Թուրքիայում արդեն փոխվել էր իրադրությունը, իշխում էր «նոր մտածող» Մ. Զեմալը, և քրիտանական դիվանագիտությունը որոշեց իրականացնել արժեքների նորովի վերազնախառում, այսինքն՝ համագործակցել թուրքիզմի նոր ներկայացուցչի հետ։

Բեքիր Սամիին Լոնդոնում հաջողեց համաձայնության գալ. «երիտթուրք 64 աքսորականների ազատ արձակման վերաբերյալ։ Դրա դիմաց Անկարայի կառավարությունը գերությունից ազատելու էր անգլիացի զինվորականներին»²², որոնց Զեմալ Աթաթուրքը զերել էր հենց նույն նպատակով։²³ Մալթայում դեռևս պետք է մնային այն թուրքերը, որոնց հանցանքն ավելի ծանր էր։

«Ժրապես, ապրիլի 29-ին անգլիական շոգենավով Իտալիա անցան Հյուսեյին Ջավիդը, Սայիդ Հալիմ, Աքբաս Հալիմ փաշաները, իսկ հետո ապրիլի 30-ին՝ Խալիլ Հաճի Աղի, Ջիա Գեռք Ալի, Աթըֆ, Ռիզա, Ահմեդ Նեսիմի, Ադա օղլու Ահմեդ, Ռուհմի, Ջանփոլադ բեյերը, Հաջի Ահմեդ փաշան և ուրիշներ»։ Այնուհետև, Կ. Պոլսում լույս տեսնող «Վերջին լուր» թերթի համաձայն. «Մալթա կղզում ազատ շրջում էին Ջեմալ և Ջևադ փաշաները, Սուլեյման Նազիֆ, Ջելալ Նուրի, Ալի Ջինանի, ծովային նախկին նախարար Ռեուֆ, Քարա Վասըֆ, ոստիկանության քաղաքական ճյուղի նախկին տնօրեն Մուամմեր, Աքբա Գյունդուզ, Միդհատ Շյուքրի, ծերակուտական Սեիդ բեյերը և այլն։ Մալթայում էին մնում նախկին կուսակալ Թահսին, Արդուլ Խալիք, Պետրի, Սուլեյման Նեճմի բեյերը, պարենավորման նախկին նախարար Զեմալ բեյը և ուրիշներ»։²⁴

1921թ. մայիսին Բեքիր Մամիին փոխարինած Յուսուֆ Քեմալը, Լոնդոնում կնքված մի նոր համաձայնագրով արդեն հասավ նրան, որ ազատ արձակվեցին բոլոր բանտարկյալներն անխտիր, կրկին ի փոխանակությունը քրիտանացի ռազմագերիներին:²⁵

Ահա այսպես էր միջազգային իրավունքը, հանձնիս Ալբիոնի, իրականացնում 1915թ. մայիսի 24-ի «մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործությունների» պատժմանն ուղղված արդարադատությունը: Ավելին, անգլիացիների կողմից բանտարկյալների ազատ արձակումը հիմնավորվում էր «փաստացի ապացույցների բացակայությամբ»:

Բժախնդիր քրիտանացի քաղաքական գործիչներն ու իրավաբանները, Մուրդոսի զինադատարի և Թուրքիայի հետ ստորագրված Սևրի պայմանագրի միջև ընկած ժամանակահատվածում, իսկապես փորձեցին հավաքել ապացույցներ՝ նախատեսվելիք դատարանին ներկայացնելու համար: Այդ է վկայում Անգլիայի արտաքին գործերի նախարար լորդ Զերգոնի հրահանգը Վաշինգտոնում իրենց դեսպան Էուքլանդ Գիդսին, որով պատվիրվում էր վերջինիս՝ ԱՄՆ կառավարության աղբյուրների հիման վրա ապահովել Հայոց ցեղասպանության և նրա հեղինակների վերաբերյալ «ակնհայտ և քավարար ապացույցներ»: Պատասխան մամուլում Գիդսը նշում է, որ «...հայերի բռնազաղթի և կոտորածների վերաբերյալ գոյություն ունեցող հսկայական փաստաթղթերն » առնչվում են ավելի շատ «հանցագործություններին», քան «մեղսակից անձանց»:²⁶

1920թ. կեսերին Կ.Պոլսում Բրիտանական զերագույն հանձնաժողովի քաղաքա-իրավական հարցերով աշխատակից Լեմբն իր հուշագրում քվարկում էր հայկական ցեղասպանության նախաձեռնողների և իրականացնողների արդյունավետ դատապարտմանը խոչընդոտող փաստացի դժվարությունները՝ 1. հայոց կոտորածները հրահանգող թուրքական պաշտոնյաների ուղղակի հրամանների բացակայությունը, 2. մեղսագործների դատավարությանը մասնակցելու գործում դաշնակից (իմա՝ Անտանտի) կառավարությունների դժկամությունը, 3. Մերձավոր Արևելքի անգլիական իշխանությունների անտարբերությունը, 4. հայ մտավորականության և արական սեռի բնակչության նախօրոք ոչնչացումը, որը հայոց ողբերգության պատասխանատվության համար պայքարի գործընթացը դարձնում էր նվազ հասանելի, 5. հանցագործների դատապարտման վերաբերյալ դաշնակիցների նկատմամբ հասարակության անվստահությունը, 6. Մալթայում ներկայվածների վերջնական ազատ արձակման վերաբերյալ խոսակցությունները:²⁷ Լեմբն իհարկե չէր նշում, որ Բրիտանական զերագույն հանձնաժողովի հունա-հայկական քաժնում հավաքվել էր հսկայածավալ տեղեկություն Մալթայի 118 կալանավորների և հայկական կոտորածներում մեղսակից մոտավորապես 1000 այլ անձանց վերաբերյալ:²⁸

Անշուշտ, Անգլիայի տիրապետության ներքո գտնվող նախկին Օսմանյան կայսրության տարածքում հայերի դեմ իրականացրած ոճրագործության վերաբերյալ ապացույցների հավաքագրումը, թերևս, ամենադյուրին գործն էր քրիտանական և՛ քաղաքական, և՛ քաղաքական իրավաբանների համար: Դրան խոչընդոտող միակ գործոնը միևնույն կշեռքի վրա դրված արդարադատության և քաղաքական նպատակահարմարության կոդմոդորշումների միջև վերջինիս գերապատվություն տալն էր: Այս տեսանկյունից երկդիմի ու կեղծ էր Ֆորին Օֆիսի արևելյան դեսպարտամենտի փոխքարտուղար Վ. Ս. Էդմոնսի դիտարկումը, որ. «Կ. Պոլսի ռազմական

(իմա՝ թուրքական – Տ. Ս.) դատարանի արխիվներում հավանաբար գոյություն ունեն որոշ ապացույցներ, բայց բուն կարևոր աղբյուրները հեռացվել էին, մախքան մենք կսկսեինք դրանք ուսումնասիրել»:²⁹ Նույն կարծիքը հայտնեց բրիտանացի դատավոր Լինգդեյ Մմիթը, որի կարծիքով. «մեղադրական փաստաթղթերի մի ճշմանակալից քանակություն է հավաքվել թուրքական կառավարության կողմից, բայց ապարդյուն է դրանց ստանալն ակնկալելը: Ուստի, միակ այլընտրանքը նրանց (իմա՝ Մալթայի հանցագործներին – Տ. Ս.) որպես պատանդ պահելն ու բրիտանացի կալանավորների հետ փոխանակումն է»:³⁰ Փաստորեն այն ինչ իրականում տեղի ունեցավ:

Կառավարությանը փոխանցած վերջնական կարծիքի մեջ անգլիական թագի իրավական ծառայողները վստահորեն արտահայտեցին այն տեսակետը, որ վերոհիշյալ պատճառներով թուրքերը չեն կարող դատվել և ճանաչվել մեղավոր:³¹

Մալթայում գտնվող հայաջնջման կազմակերպիչների և մեղսակիցների ազատ արձակումից քիչ անց, նույն Քերզոնը կշտամբում էր իրեն «մեծ սխալ» թույլ տալու համար: Այդ դավադիր գործարքը նա վերագրեց. «այն ճնշմանը, որը ես միշտ զգացել եմ, որ սխալ է լինելու», մեկնաբանելով այդ սխալը հետևյալ կերպ. «Որքան քիչ մենք խոսեցք այդ մարդկանց մասին, այդքան ավելի լավ: ... Ես ստիպված եմ բացատրելու, թե ինչու մենք ազատ արձակեցինք Մալթայի բռնադատվածներին: ... Պառլամենտի անդամների համառ կարծիքն այն է, որ մեկ բրիտանացի քանտարկյալն ավելին արժե, քան մի ամբողջ նավ բարձրած թուրքերի ամբոխը»:³²

Լորդ Քերզոնը կրկին կեղծում էր, որովհետև վերջինիս փեսան էր, որ փոխանակվեց Մալթայում գտնվող. «երկու տխրահոյակ ցեղասպան ոճրագործներ Ֆեթիի բեյի և Սեհմեդ Ռեուֆի հետ»: Այս գործարքը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ քեմալական պատվիրակ Բեքիր Սամի բեյը Փարիզում բանակցում էր Բրիանի, իսկ Լոնդոնում՝ լորդ Քերզոնի հետ:³³

Մալթայում արգելափակված երիտթուրք հանցագործներին անգլիական զերեվարված զինվորների հետ փոխանակումից հետո, Մեծ Բրիտանիայի խորհրդարանի համայնքների պալատում 1922թ. մարտի 27-ին խնդրո վերաբերյալ տեղի ունեցան քննարկումներ: Պառլամենտականները խոսում էին թուրք հանցագործների վրա տարեկան 25 հազար ֆունտ ստեռլինգ ծախսի, թուրքական զերության մեջ եղած անգլիական զինվորականների մահացության բարձր տոկոսի և այլնի մասին, փաստորեն՝ արդարացում գործարքը: Դատապարտելով պատգամավոր Ջ. Վարդին՝ Թ. Փ. Օ'Կոննեը փոխանակվածների շարքում հիշատակեց Մուսամեր բեյին, որը հրահրել էր 30 հազար հայերի կոտորածը, Խոջա Իլիասին՝ Մուշից, որը պատասխանատու էր Մուշի և Բիթլիսի կոտորածի համար, իսկ ապա՝ մեծ պաշտոն էր ստացել Անկարայի կառավարության մեջ: Փոխանակվածների մեջ էր Էրզրումի նահանգապետ Թահսին բեյը, որը այդ տարածքում կատարված վայրագությունների զխավոր պատասխանատուներից մեկն էր: Սրանց շարքում էին ոճրագործներ Զավուշ Մուստաֆան (Տրապիզոնից), զինվորական Ալի Իսսան փաշան՝ արևելյան վիլայեթներում կոտորածների կազմակերպման մասնակից, որին Մ. Քեմալը բարձր պաշտոնի կարգեց իր բանակում:³³

Կալանավորների ազատ արձակման ուղղությամբ կատարվող ամենամեծ ճնշումը գալիս էր ռազմական նախարար Ու. Չերչիլից, որը համո-

զեց կառավարությանը որդեգրել ավելի մեղմ վերաբերմունք «նվազ մեղսակից» քուրքերի նկատմամբ:³⁴

Ահա այսպես ավարտվեց հայերի ոչնչացման համար պատասխանատու երիտթուրք պարագլուխների դատապարտման քրիտանական փորձախաղի ողջ քննադրությունը: Ձուր էր Զերգոնի ինքնակշտամբանքը, քանզի Անգլիայի կողմից Հայոց ցեղասպանության և Հայկական հարցի այս ուրացումներին հաջորդեց 1923թ. Լոզանի կոնֆերանսը, որտեղ. «Զերգոնն ու կոմսյանիան խաչ քաշեցին Սան-Ռեմոյի և Սևրի հռչակածների վրա, հաշտության ձեռք պարզեցին քննական Թուրքիային, դիվանագիտության պատմությանը հանձնելով Հայկական հարցը»:³⁵

Հայոց ցեղասպանության համար միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելուց երաժարումն ուներ ոչ միայն քաղաքական նպատակահարմարությունից թխող դրդապատճառներ, որով առաջնորդվեցին տերությունները, այլ նաև՝ իրավական: Իրավական ամենագլխավոր փաստարկն, առաջին հերթին, առաջ էր քաշվում քննականների կողմից, ըստ որի, Թուրքիայի տարածքից դուրս հանցագործների պատժման նպատակով դատարանի ստեղծումը ռոմձգություն է Թուրքիայի սուվերենության նկատմամբ, որ Թուրքիան ինքն ունի յուրիսդիկցիա և իրավասություն՝ իր քաղաքացիներին հայրենական դատարանի առջև կանգնեցնելու համար:³⁶

1919թ. Փարիզում գումարված հաշտության կոնֆերանսի Պատասխանատվությունների և սանկցիաների հանձնաժողովում տեղ գտած՝ ոճրագործների պատժման վերաբերյալ երկարատև քննարկումները և այդ մույն մասնակիցների հղումները 1899թ. «Պատերազմի վարման օրենքների և սովորույթների մասին» Հաագայում ընդունված I կոմվենցիայի «մարդկության» և «մարդկության օրենքների»³⁷ սկզբունքներին, վերջիվերջո հանգեցրին այն զաղափարին, որ Հաագայի կոմվենցիաները (այդ թվում նաև Հաագայի խաղաղության II կոնֆերանսի IV կոմվենցիան) ամերիկյան ներկայացուցիչներ Ռ. Լամսինգի և Ջ. Սքոթի կողմից որակվեցին որպես անվավեր ճանաչված և ֆակտուտատիվ: Ընդունելով հայերի դեմ իրականացրած ոճիրի՝ ցեղասպանության փաստը, այդ ոճիրի կազմակերպիչների դատապարտումը հանձնաժողովի եվրոպական անդամները որակեցին որպես Թուրքիայի ներքին գործ:³⁸ Ոորից մոռացության տալով իրենց իսկ 1915թ. մայիսի 24-ին հռչակած «մարդկության և քաղաքակրթության դեմ ... կատարած ... հանցագործությունների» համար «թուրքական իշխանություններին պատժելու» մասին միջազգային պարտավորությունը: Տերությունները, մասնավորապես Մեծ Բրիտանիայի քաղաքական գործիչներն ու իրավաբանները, այդ տերմինները վերհիշեցին ավելի քան 2,5 տասնամյակ անց՝ հրեական ողջակիզման կազմակերպիչ հանցագործներին պատժելու մասին Նյուրնբերգի խարտիան, իսկ այնուհետև՝ 1948թ. դեկտեմբերի 9-ի ՄԱԿ-ի «Ցեղասպանությունը կանխելու և դրա համար պատժելու մասին» կոմվենցիան, ինչպես նաև մարդու իրավունքները պաշտպանող մի շարք այլ միջազգային իրավական փաստաթղթեր կազմելիս:³⁹

«Ցեղասպանություն» տերմինը շրջանառության մեջ դնող և դրա համար միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտության զաղափարի կողմնակից Ռաֆայել Լեմկեն, իր հավաստմամբ, ցնցված էր Հայոց ցեղասպանության ոճիրի համար պատասխա-

մատվության ամբողջական բացակայությամբ: «Պատերազմի ավարտից հետո, - գրում է Լեմկեն, - ավելի քան 150 զինվորական հանցագործներ ձերբակալվեցին քրիստոնական կառավարության կողմից և աքսորվեցին Մալթա կղզի: Հայերը պատվիրակություն ուղարկեցին [խաղաղության կոմիտեի մի օր պատվիրակությունը կարդաց թերթերում, որ բոլոր թուրքական ռազմական հանցագործներն ազատ են արձակվել: Ես ցնցվեցի: Ազգը սպանված էր, իսկ դրանում մեղավորներն ազատ արձակվեցին: Ինչո՞ւ են պատժում առանձին անհատին, երբ մեկ անձը սպանում է մյուսին: Ինչո՞ւ է, որ միլիտարի մարդկանց սպանությունը պետք է լինի նվազ հանցագործություն, քան մեկ մարդու սպանությունը»:⁴⁰

Լեմկենի մամնապես զարմացրեց դեռևս 1921թ.՝ որպես Լվովի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ուսանող, Հայոց ցեղասպանության և միջազգային իրավունքի հարաբերակցության հարցի վերաբերյալ պրոֆեսորներից մեկի հետ իր ունեցած բանավեճը: Պրոֆեսորը պատճառաբանում էր, որ հայերն օսմանյան հպատակներ էին, և պետությունը նրանց հետ կարող էր վարվել ինչպես կամենար, ներառյալ նրանց սպանելը, որ նրանց պաշտպանելու համար գոյություն չունի որևէ միջազգային օրենք, և որ. «երբ դուք միջամտում եք պետության ներքին գործերին, դուք խախտում եք տվյալ պետության սուվերենությունը (ինքնիշխանությունը)»: Ութ տարի անց, երբ Լեմկեն նշանակվեց Վարշավայի շրջանի դատախազ, իր մորը գրեց. «Այժմ, ես առանց միջնորդի պետք է սովորեմ, թե ինչպես են գործում օրենքները: Թերևս, հետո ես կկարողանամ նրանց հետ որևէ բան անել»:⁴¹ Արդեն 1947թ. իր հոդվածներից մեկում Լեմկեն գրում է. «Ցեղասպանությունը որպես միջազգային իրավունքի ներքո հանցագործություն հայտարարելով և դարձնելով այն միջազգային հարաբերությունների հիմնախնդիր՝ հաստատվեց քնաջնջման դատապարտված փոքրամասնությունների անուից [միջազգային հանրության կողմից] միջամտելու իրավունքը»:⁴²

Նույն սկզբունքով էր առաջնորդվում Նյուրնբերգում մացիստ ոճգործների զլխավոր մեղադրող անգլիացի Հարթի Շոուքրոսը, որը արդարացնում էր արտաքին միջամտությունը, երբ վայրագությունները ոճրագործվում են թմնապետների կողմից, իրենց իսկ հպատակների նկատմամբ: Նա հայտարարեց. «Այս օրում տեսակետն ազդեց եվրոպական տերությունների վրա, որոնք ժամանակին հավանություն տվեցին միջամտությանը (իմա՝ 1915թ. մայիսի 24-ի հայտարարությանը)՝ պաշտպանելու Թուրքիայի հպատակ քրիստոնյաներին դաժան հալածանքներից: Փաստն այն է, որ պատերազմի ընթացքում մարդասիրական միջամտությունը միջազգային իրավունքի նորույթ չէ»:⁴³

Բայց այն, ինչպես փորձեցինք ցույց տալ, ի ցավս դարի ամենամեծագույն ողբերգություններից մեկն ապրած հայ ժողովրդի, կիրառություն չգտավ ցեղասպանության իրագործողների պատժման գործընթացում, «արդարադատ» Ալբիոնի քաղաքական նպատակահարմարությունից բխող դրապատճառներով: Ուստի, տեղին էր Ուիմսթոն Չերչիլի մեջբերած՝ երիտթուրքերի ցանկությունը. «Մենք արժանի ենք պատժվելու, բայց թող մեզ պատժի մեր հին քարեկամ Անգլիան»:⁴⁴

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ Փափազյան Ա. Հ. Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Երևան, 1988, էջ 6:
- ² Տե՛ս Տիգրանեան Տ. Անգլիան եվ հայերը, Երևան, 1994, էջ 80-81:
- ³ Տե՛ս Կիրակոսյան Ջ. Ս. Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հ. II, Երևան, 1983, էջ 174:
- ⁴ Տե՛ս Տաաթեան Վ. Ն. Հայոց ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով, Բերկլի, 1995, էջ 6:
- ⁵ Yeghiayan V. The Armenian Genocide and the Trials of the Young Turks, California, 1990, p. xxi, (մեջբերումը տե՛ս ըստ FO 371/6500/1722/R/1315):
- ⁶ Նույն տեղում:
- ⁷ Տե՛ս նույն տեղում:
- ⁸ Տե՛ս Տաաթեան Վ. Ն. նշվ. աշխ., էջ 5:
- ⁹ Տե՛ս Լազեան Գ. Հայաստան եվ հայ դատը, Երևան, 1991, էջ 184:
- ¹⁰ Yeghiayan V. նշվ. աշխ., էջ xxv, (մեջբերումը տե՛ս ըստ FO 371/4174):
- ¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ xxvi:
- ¹² Dadrian Vahakn N.. The Key Elements In the Turkish Denial of the Armenian Genocide: A Case Study of Distortion and Falsification, Toronto, 1999, p. 30, (այսուհետև՝ Dadrian Vahakn N., «The Key Elements In the Turkish Denial of the Armenian Genocide...»), տե՛ս նաև Gürün Kamuran. The Armenian File, New York, 1985, pp. 212-213:
- ¹³ Տե՛ս Տիգրանեան Տ. նշվ. աշխ., էջ 81:
- ¹⁴ Տե՛ս Yeghiayan V. նշվ. աշխ., էջ xxvi:
- ¹⁵ Տե՛ս Ռիֆաթ Մկան Զադե. Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը, Բեյրութ, 1938, էջ 320-322:
- ¹⁶ Տե՛ս Dadrian Vahakn N. «The Key Elements In the Turkish Denial of the Armenian Genocide...»), pp. 64-65.
- ¹⁷ Черчилль У. Мировой кризис, М., 1932, стр. 247.
- ¹⁸ Տե՛ս Կիրակոսյան Ջ. Ս. նշվ. աշխ., էջ 228:
- ¹⁹ Willis J. Prologue To Nuremberg: The Policy and Policy of Punishing War Criminals of the First World War, Westport, pp. 180-181.
- ²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 181:
- ²¹ Տե՛ս Տիգրանեան Տ. նշվ. աշխ., էջ 81:
- ²² «Վերջին լուր», Կ. Պոլիս, 20.05. 1921:
- ²³ Dadrian Vahakn N. The Armenian Genocide and the Legal and Political Issues In the Failure To Prevent Or To Punish the Crime, "University West Los Angeles Review", vol. 29, p. 63, (այսուհետև՝ Dadrian Vahakn N.. «The Armenian Genocide and the Legal and Political Issues...»):
- ²⁴ Կիրակոսյան Ջ. Ս. նշվ. աշխ., էջ 254:
- ²⁵ Տե՛ս Dadrian Vahakn N. «The Armenian Genocide and the Legal and Political Issues...», pp. 62-63:
- ²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 69-70.
- ²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 73:
- ²⁸ Տե՛ս նույն տեղում:
- ²⁹ Տե՛ս նույն տեղում:
- ³⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 74:
- ³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 75:
- ³² Տե՛ս նույն տեղում:
- ³³ Ավելի մանրամասն տե՛ս "The Armenian Review", 1982., Vol. 35.
- ³⁴ Տե՛ս L'Extermination Des Chrétiens d'Orient, Paris, 1922, pp. 19-21, (մեջբերումը տե՛ս ըստ Կիրակոսյան Ջ. Ս. նշվ. աշխ., էջ 257-258):

- ³⁵ St'u Willis J. Գլխ. աշխ., էջ 160:
- ³⁶ Կիրակոսյան Ջ. Ս., Մանակյան Ռ. Գ. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923թթ.), Երևան, 1972, էջ 62:
- ³⁷ St'u Bassioni M. C. Crimes Against Humanity in International Criminal Law, Boston, 1992, pp. 83-86:
- ³⁸ St'u Willis J. Գլխ. աշխ., էջ 157:
- ³⁹ St'u Dadrian Vahakn N. «The Armenian Genocide and the Legal and Political Issues...», p. 67:
- ⁴⁰ St'u Dadrian Vahakn N. «The Key Elements In the Turkish Denial of the Armenian Genocide...», p. 35.
- ⁴¹ Барсегов Ю. Г. Геноцид армян — Преступления против человечества. О правомерности термина и юридической квалификации, Ереван, 1990, стр. 10.
- ⁴² Yahreas H. "He Gave a Name to the World's Most Horrible Crime", Collier's, March 3, 1952, p. 29, (մեջբերումը տե՛ս նաև Dadrian Vahakn N. «The Key Elements In the Turkish Denial...»), p. 36.
- ⁴³ Lemke Raphael. Genocide As a Crime Under International Law, "American Journal of International Law", No. 41, p. 150.
- ⁴⁴ Dadrian Vahakn N. The Armenian Genocide and Legal Interconnections Between the Armenian Genocide and the Jewish Holocaust: From Impunity To Retributive Justice, "The Yale Journal of International Law", vol. 23:2, 1998, p. 554.
- ⁴⁵ Черчилль У. Գլխ. աշխ., նույն տեղում:

Резюме

Международная правовая ответственность за Геноцид армян и Великобритания (1915-1923 гг.).

Тигран Саруханян

В статье рассматривается вопрос Геноцида армян во время Первой мировой войны в соотвествии с вопросами наказания преступников и международного права. Торжественная декларация союзнических держав Антанты (Россия, Англия и Франция) от 24 мая, 1915г., о том, что: "Ввиду этих новых преступлений против христианства и цивилизации, союзнические государства сим публично оъявляют ... что они будут возлагать личную ответственность на всех членов оттоманского правительства, а также на тех его представителей, которые причастны к этим резням", потерпела неудачу в процессе взыскания наказания после Первой мировой войны. Из-за политических целесообразностей, пожеждавшие союзники, осовенно англичане, прилежно уклонились от рассмотрения международных правовых слушаний по нормам "преступления против человечества". Более того, британцы переместили турецких военных преступников из тюрьмы Сераскерат в Истамбуле в Малиту, а затем, посредством переговоров с представителями кемалистов, освободили всех преступников Геноцида армян - в замен на некоторых британских подданных, удерживаемых в роли заложников. Следует, что не только Турция, но и ее союзник - Великобритания, должна делить ответственность за ненаказуемость одного из самых ужасных преступлений ХХ столетия, за Геноцид армян.

Summary

International Judicial Responsibility for the Armenian Genocide and Great Britain, 1915-1923

Tigran Sarukhanyan

The article examines the Genocide of Armenians during World War I closely connected with the issues of punishment of the perpetrators and International Law. The solemn declaration of the Entente Allied Powers (Russia, Great Britain and France) of May 24, 1915, that "In view of these new crimes against humanity and civilization ... the Allied governments announce publicly ... that they will hold personally... responsible all members of the Ottoman government and those of their agents who are implicated in such massacres", failed to exact punishment after World War I, and the War criminals were, thereby, rewarded. Due to the political expediency, the victorious Allies, especially the British, studiously avoided getting judicially involved in the envisaged international trials on the new penal norm "crimes against humanity". Moreover, the British removed the Turkish War criminals from Istanbul prison of Seraskerat to Malta, and then, through the negotiations between the Kemalist representatives, they set free all the perpetrators of the Armenian genocide in exchange of some British subjects which were being held hostage by the Kemalists. Therefore, Turkey, and its previous and present ally Britain must share both the responsibility for impunity and absence of punishment for one of the most horrible crimes of the XX century, for the Armenian genocide.